# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2017թ. մայիսի 25-ից 26-ը Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ պարոն Խաչիկ Հակոբյանի գործուղման վերաբերյալ**

## 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Խաչիկ Հակոբյան

## 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

## 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստանի Դաշնություն)

2017թ. մայիսի 25-ից 26-ը

## 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողով

## 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Բնապահպանական կրթություն-մաքուր երկիր» խորագրով Նկյան միջազգային բնապահպանական 8-րդ կոնգրեսին

## 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Նիստի ընթացքում քննարկվել են բնապահպանական կրթության համակարգերի ձևավորումն՝ որպես բնապահպանական անվտանգության երաշխիք, հանրային առողջության պահպանում և առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառում: Գումարվել են լիագումար նիստեր և թեմատիկ կլոր սեղաններ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման, կենսաբազմազանության զարգացման, բնապահպանական կրթության, էկոլոգիական բարենպաստ պայմանների

ստեղծման, թափոնների արդյունավետ կառավարման վերաբերյալ: Մասնավորապես, «Բնապահպանական կրթության ժամանակակից համակարգը. կրթության խնդիրները և զարգացման ուղղությունները» կլոր սեղանի շրջանակներում ներկայացվել է «Բնապահպանական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ելույթ (ելույթը կցվում է):

## 7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության պատվիրակությունների հետ քննարվել են հնարավոր համագործակցության ուղղությունները և ձևաչափերը:

ՀՀ բնապահպանության

նախարարի տեղակալ՝

Խ.Հակոբյան